

Գ. Վ. ԴԱՎՐՈՒՆՏԱՆ

**ԱՇԽԱՆԱՑԱՆ ԵՎ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՅԻ  
ՓՈՐՁԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

Թալինը Հայաստանի լեռնային շրջաններից մեկն է. նա գտնվում է ծովի մակերևույթից 1954 մետր բարձրության վրա:

Վերին թալինը, որը շրջանի կենտրոնն է, ունի համեմատաբար ավելի հարթ տարածություն, քան շրջանի մյուս գյուղերը: Կլիման այստեղ չոր կոնտինենտալ է, տարեկան սեղումների միջին քանակը կազմում է 498 մմ: Ուշ գարնանային ցրտահարություններ լինում են մինչև մայիսի 12-ը, իսկ վաղ աշնանայինը հոկտեմբերի առաջին տասնօրյակում:

Թալինի շրջանում տեղումների մեծ մասը լինում է վեգետացիայի առաջին շրջանում, իսկ վերջում՝ նվազում է, այդ հանգամանքը բացասաբար է անդրադառնում հատկապես գարնանացանների վրա:

Դաշտային փորձերը դրվել են բաց շագանակագույն կարբոնատային հողերի վրա, անջրդի պայմաններում, չորս կրկնողությամբ: Յուրաքանչյուր փորձամարդի մեծությունը եղել է 120 ֆմ: Հանգային պարատանյութերից օգտագործվել են՝ ազոտ—ամոնիակային սելիտրայի, ֆուֆոր—հասարակ սուպերֆոսֆատի և կալիում—կալիում քլորիդի ձևով:

Վեգետացիայի ընթացքում կատարվել են ֆենողոգիական դիտողություններ բույսերի թփակալման, հասկակալման և հասունացման ժամանակի:

Բերքահավաքի հաշվառումը կատարվել է ամբողջ բերքը կշռելու և փորձական խրձի կալսման մեթոդով: Փորձերի տվյալները ենթարկվել են մաթեմատիկական մշակման վարիացիոն ստատիստիկայի մեթոդով: Փորձահողամասին կից կատարվել է հողային կտրվածք:

**Սնուցման ազդեցությունը աշնանացան ցորենի բերքի վրա**

Թալինում, հացահատիկային կուլտուրաներից, աղնանացան ցորենը կազմում է ցանքի 2/3 մասը, իսկ գարնանացանը՝ 1/3: Բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է մյուս ագրոմիջոցառումների հետ միասին կատարել նաև մոնուցման աշխատանքներ:

Փորձը դրված է եղել Վ. Թալինում, «գյուղի տակ» կոչվող հանդամասում, բաց շագանակագույն հողում: Ստորև բերում ենք սնուցման փորձի արդյունքները (աղյուսակ 1):

Ինչես երևում է տվյալներից (աղյուսակ 1) ազոտական պարատանյութերը տվել են բերքի զգալի հավելում: Յոսովորական և կալիումական պարատանյութերը, ազոտի ֆոնի վրա, բերքի հավելում չեն տվել, չնայած այդ հողերի ֆոսֆորով աղքատ լինելուն:

Մնուցման ազդեցությունը աշնանացան ցորենի բերքի քանակի  
և որակի վրա (Սպիտակահատ)

Վ. Թալին, 1951 թ.

Փորձի սխեման	Միջին բերքը g/5 M±m	Բերքի հավելում		1000 կգ	%	0/-ով բաժանման չոր նյութի մեջ ընդհանուր առաջարկութեան աղբանակին
		g/5	%			
Առանց պա- րաբուացման	11,1±1,1	—	—	34,71	1,89	10,77
N <sub>40</sub> . . . .	15,7±0,8	4,6	41,4	34,34	2,18	12,43
N <sub>40</sub> P <sub>36</sub> K <sub>37</sub>	16,1±1,3	5,0	45,3	34,44	2,08	11,86

Այս հանգամանքը հավանաբար բացատրվում է նրանով, որ սնուցման ձևով տրված սուպերֆոսիատը թալինի ուժեղ կարբոնատային հողերում, և այն էլ անջրդի պայմաններում, բույսերի կողմից չի օգտագործվել և մնացել է հողի մակերեսային շերտում:

Հատիկի անալիզի տվյալներից պարզվել է, որ պարաբուացման հետևանքով ցորենի մեջ աճել է հում պրոտեինի պարունակությունը:

1952 թ. դրված սնուցման փորձում ազոտական պարարտանյութերը նույնպես տվել են բերքի զգալի հավելում (աղյուսակ 2), սակայն այս փորձում ամենաբարձր բերքը ստացվել է աղոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի համատեղ կիրառումից:

Մնուցման ազդեցությունը «Սպիտակահատ» ցորենի բերքի քանակի և որակի վրա

Վ. Թալին, 1952 թ.

Փորձի սխեման	Միջին բերքը g/5	Բերքի հավելում		%	0/-ով բացարձակ չոր նյութի մեջ ընդհանուր առաջարկութեան աղբանակին
		g/5	%		
Առանց պա- րաբուացման	12.5±0,8	—	+	2,01	11,46
N <sub>40</sub> . . . .	14,3±1,0	1,8	14,4	2,15	12,26
N <sub>40</sub> P <sub>36</sub> . . .	15,9±1,1	3,4	27,2	2,42	13,79
N <sub>40</sub> P <sub>36</sub> K <sub>37</sub> .	17,5±1,6	5,0	40,0	—	—

Փորձի արդյունքները ցույց են տալիս աշնանացան պարարտանյութերը նպաստում են բերքի ոլ միայն քանակի, այլև որակի բարձրացմանը (աղյուսակ 2):

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 3-ի տվյալները այս փորձում գարնանացան ցորենի բերքը շատ ցածր է ստացվել, համեմատած աշնանա-

յան ցորենի բերքի հետ: Սա պետք է բացատրել նրանով, որ փորձը անջրդիր էր, և բացի այդ, վեգետացիալի ընթացքում երկար ժամանակ երաշտ էր, իսկ հետագայում եղած տեղումները՝ աննշան: Այդ պատճառով էլ տրված պարարտանյութերը լրիվ չեն յուրացվել բույսերի կողմից:

### Աղյուսակ 3

Հանքային պարարտանյութերի աղքեցությունը զարնանացան (Գալգալոս) ցորենի բերքի քանակի և որակի վրա անբարենպաստ պայմաններում

Վ. Թալին, 1951 թ.

Փորձի սխեման	$\frac{\text{Մեջին բերք}}{\text{g/հ}}$ $M \pm m$	$\frac{\text{Բերք}}{\text{կմում}}$	$\frac{\text{Կամաց}}{\text{կմ}}$	% ուղղ բացարձակ	
				Հոգածական նուրա- զուսական	Հոգածական նուրա- զուսական
Առանց պա- րարտացման	$3,6 \pm 0,2$	—	31,72	3,39	19,32
$N_{60}$ . . . .	$3,9 \pm 0,4$	0,3	31,59	3,57	20,35
$N_{60}P_{60}$ . . .	$4,4 \pm 0,3$	0,8	32,69	3,41	19,44
$N_{60}P_{60}K_{60}$ .	$4,4 \pm 0,3$	0,8	33,67	3,18	18,13

Այսպիսով, աշնանացան և գարնանացան ցորենի պարարտացման դաշտային փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ Թալինի շրջանի հողականացային պայմաններում հանքային պարարտանյութերը զգալի չափով բարձրացնում են ցորենի բերքատվությունը, ըստ որում փորձարկված պարարտանյութերից ամենաբարձր էֆեկտ ստացվում է լրիվ պարարտացման վարիանտում, իսկ առանձին պարարտանյութերի էֆեկտիվությունը ներկայացնում է հետևյալ նվազող շարքը  $N > P > K$ :

Д. В. ДАРБИНЯН

## РЕЗУЛЬТАТЫ НЕКОТОРЫХ ОПЫТОВ ПО УДОБРЕНИЮ ОЗИМОЙ И ЯРОВОЙ ПШЕНИЦЫ В ТАЛИНСКОМ РАЙОНЕ АРМЯНСКОЙ ССР

### Р е з ю м е

Результаты опытов показали, что в условиях Талинского района минеральные удобрения в значительной степени повышают урожай пшеницы. Отдельные минеральные удобрения по их эффективности располагаются в следующем порядке:  $N > P > K$ .

